ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի, Պալատի նախագահի 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ հաստատված և 28.07.2021. թիվ 133-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կանոնակարգի» 6-րդ, 7-րդ և 29-րդ կետերի պահանջներով,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պալատի երիտասարդական խորհրդի նախորդ կազմի լիազորությունները դադարել են,

նկատի ունենալով Պալատի երիտասարդական խորհրդի նախագահի և անդամների նշանակման անհրաժեշտությունը և թեկնածուների համաձայնության առկայությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

*1. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի նախագահ նշանակել փաստաբան **Միքայել Դանիելյանին** (արտոնագիր թիվ 2866)՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ժամկետով.*

2. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի անդամներ նշանակել՝

*1) փաստաբաններ **Նազիկ Մալխասյանին** (արտոնագիր թիվ 2617) և **Միքայել Ահարոնյանին** (արտոնագիր թիվ 2657)՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ժամկետով.*

*2) փաստաբաններ **Հասմիկ Թադևոսյանին** (արտոնագիր թիվ 2778) և **Վարդուհի Սարգսյանին** (արտոնագիր թիվ 2903)՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ժամկետով.*

*3) փաստաբան **Աբգար Պողոսյանին** (արտոնագիր թիվ 2778)՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ժամկետով:*

3. Երիտասարդական խորհրդի մեկ անդամի անդամի նշանակման հարցին անդրադառնալ 2021թ. աշնանը կազմակերպվող որակավորման քննությունը հանձնած փաստաբանների կազմից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

07 սեպտեմբերի 2021թ.
թիվ 215-Ա
ք. Երևան